Նպատակ

Արտադրել վերականգնողական նորարարական MetaGait սարքեր իրենց VR (վիրտուալ իրականություն) միջավայրերով և տեղադրել սարքերը հասանելի վայրում, որտեղից անվճար կկարողանան օգտվել հաշմանդամություն ունեցող անձինք, մանկական ուղեղային կաթված ունեցող անձինք, առողջական վատթարացում ունեցող անձինք և այլ շահառուներ:

Ծրագրի նկարագրություն

Քառօրյա պատերազմից հետո (2016թ.) կինեզիոլոգ Դավիթ Արսենյանը սկսեց աշխատել ծանր վիրավորում ստացած զինվորների հետ, որոնց հետ աշխատելու համար շատ դեպքերում անհրաժեշտ էր մի քանի մասնագետներից բաղկացած

թիմ: Ձիևվորների հետ ֆիզիոթերապիայի ժամանակ միաժամանակ երեք մասնագետ էր աշխատում, մեկը գրկում էր, մյուսը կոնքն էր ֆիքսում, երրորդն էլ՝ շարժում վերջույթները:

Սակայն երբ պացիենտները գնում էին տուն, վերականգնողական աշխատանքները դադարում էին տանը համապատասխան մասնագետ եւ սարք չունենալու պատճառով եւ իրենք մնում էին իրենց անվասայլակի մեջ գամված: Այս նստակյաց կենսակերպը ազդում էր ոչ միայն ֆիզիկական առողջության, այլև հոգեկան առողջության վրա:

Դավիթը սկսեց մտածել մի սարքի մասին, որը պացիենտին հնարավորություն կտար ինքնուրույն «քայլել»՝ պահպանելով մարմնի կանգնած դիրքը: Ահա թե ինչպես է ծնվել «MetaGait» սարքը: Համատեղելով կանգնած շրջանակի և էլիպսաձև վարժեցնող տարրերը՝ սարքն ունի նաև մեկ այլ նորարարություն՝ վիրտուալ իրականություն, որը հնարավորություն է տալիս պացիենտին այլ օգտատերերի հետ միասին շփվել, խաղալ, սպորտով զբաղվել և վիրտուալ շրջագայության գնալ: Սա նոր մոտիվացիա և սոցիալականացման լավ միջոց է:



MetaGait սարքը լուծում է հետևյալ խնդիրները՝ իրականացնում է քայլքի ամբողջական ստիմուլյացիա (անգամ 1 ձեռքի օգնությամբ սարքը շարժի մեջ է ընկնում և ակտիվացնում բոլոր այն մկանները, որոնք աշխատում են քայլելու ընթացքում), կանխում է ավելի քան 30 հիվանդություններ, որոնք

զարգանում են հարկադրված նստակյաց կյանքին զուգահեռ և որոնք, ըստ ԱՀԿ-ի, հանդիսանում են մահաբերության 30-40% պատճառ: Որոշ դեպքերում կարող է նպաստել կորցրած շարժունակության (օր.՝ քայլքի ֆունկցիայի) մասնակի կամ ամբողջական վերականգնման: Վիրտուալ իրականություն խաղերով և միջակայքերով անձանց մոտիվացնում է էլ ավելի ինտենսիվ վերականգնողական խաղ-վարժություններ կատարել՝ միևնույն ժամանակ հնարավորություն տալով իրականացնել կիբերտուրիզմ և կիբերսպորտ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Օր.՝ սարքի օգնությամբ հաշմանդամություն ունեցող անձը կարող է վիրտուալ շրջայց կատարել Տաթևի վանական համալիրում՝ մինչդեռ իրական կյանքում նման շրջայցը շրջապատի սահմանափակումներով պայմանավորված գրեթե անհնար է:

Դավիթը և նրա թիմը զարմանալի արդյունքների են հասել MetaGait-ի շնորհիվ: Նրանք երազում են նման սարք նվիրել զինվորական ծառայության յուրաքանչյուր վետերանի, սակայն դա դեռ իրագործելի չէ: Այո-ի թիմը որոշեց աջակցել այս կարեւոր նախաձեռնության հարցում , որն է ստեղծել վերականգնողական տարածք MetaGait սարքերով, որոնք կտրամադրվեն անվճար: Կմիանա՞ք մեզ այս կարեւոր ծրագրի իրագործման հարցում:

Բյուջե

Ինչ	ՔԱՆԱԿ	Միավորի արժեք ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ
MetaGait սարքավորման արտադրություն	2	2,150,000	4,300,000
Վերականգնողական վիրտուալ խաղ-միջավայրի պատրաստում	2	2,000,000	2,000,000

Ընդհանուր
Փոխարժեք՝ 1 ԱՄՆ դոլար = 400 ՀՀ դրամ

₦6,300,000